Հաստատված է
ՀՀ Կառավարության 1999թվականի մարտի 13-ի
Ու 149 որոշմամբ
Ձև 3

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ - 05 27.01.2017թ.

Ծաղկահովիտի ,,Կոմունալ ծառայություն՛՛ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն << ՀՈԱԿ>> ի դեմս տնօրեն ՀՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ղեկավարվելով կազմակերպության կանոնադրությամբ և օրենսդրությամբ և ՀՀ Արտակարգ Իրավիճակների նախարարություն Ք. Երևան Դավթաշեն 4-րդ թաղ. Ա. Միկոյան 109/8 աշխատակազմի ղեկավար՝ Գ Հայրապետյանի որը գործում է ընկերության կանոնադրությամբ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը իր ջրամատակարարման և համակարգին միացված ցանցի միջոցով աբոնենտին մատակարարում է խմելու որակի ջուր և իր ջրահեռացման համակարգով հեռացնում և մաքրում է կեղտաջրերը:

1.2 Աբոնենտը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերից օգտվելու կանոնների համաձայն օգտագործում է մատակարարված ջուրը, կեղտաջրերը լցնում ջրահեռացման համակարգ պայմանագրում նշված ժամկետում ու նախատեսված կարգով վճարում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սակագներով:

2 ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 կողմերը պարտավորվում են ղեկավարվել ՀՀ օրենսդրությամբ, կանոններով և սույն պայմանագրով:

2.2 Ընկերությունը պարտավորվում է

ա/ ապահովել աբոնենտի ամենօրյա ջրամատակարարումը /ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի/ 810-խ/մ 121500 /մեկ հարյուր քսան մեկ հազար հինգ հարյուր/ դրամ մեկ տարին

բ/ Աբոնենտից իր տնօրինության տակ գտնվող ջրահեռացման համակարգ ընդունել կոմունալ-կենցաղային և արտադրական կեղտաջրերը 810 խ/մ 28350 /քսան ութ հազար երեք հարյուր հիսուն/դրամ

գ/ պահպանել կողմերի տնօրինության տակ գտնվող ջրամատակարարման համակարգի սահմանազատման տեղում մատակարարվող ջրի որակը ըստ գործող ստանդարտների պահանջներին համաձայն կեղտաջրերի հեռացումն ու մաքրումը:

2.3 Աբոնենտը պարտավորվում է՝

ա/մատակարարված ջրի և կեղտաջրի հեռացման և մաքրման վարձը վճարել վճարային փաստաթուղթը ստանալուց 10 օրվա ընթացքում:

բ/ ջրի չմատակարարման, կեղտաջրերի չհեռացման կամ դրանց ոչ պատշաճ կատարման, ինչպես նաև որակի նկատմամբ կասկածներ առաջանալու դեպքում անհապաղ տեղեկացնել ընկերությանը:

գ/ ապահովել իր տնօրինության տակ գտնվող ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի ու սա րքավորումների պահպանությունը և դրանց շահագործումը:

դ/ ջրի մատակարարումից և կեղտաջրերի հեռացումից հրաժարվելու դեպքում դրա մասին տեղյակ պահել ընկերությանը:

ե/ Չգերազանցել պայմանագրով սահմանված ջրաքանակը և ջրահեռացման համակարգ կեղտաջրերի քանակն ու թույլատրելի սահմանված նորմաները:

3. ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ջրաչափի բացակայության դեպքում մատակարարված ջրի շարժման 1,5 մ/վրկ արագության և ջրամատակարարման փաստացի տևողության պայմանից հաշված վերջին փոխադարձ հաշվարկների օրվանից մինչև խախտման վերացումը

3.2 մատակարարված ջրի, կոյուղի բաց թողնված կեղտաջրերի քանակների հաշվառման ժամանակահատված է համարվում հաշվարկային ամիսը յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը ընկերությունը և աբոնենտի

պատասխանատու անձինք կազմում են փոխադարձ հաշվարկների ակտ ջրաչափի համար կողմերից մեկի չներկայանալու դեպքում կազմվում է միակողմանի ակտ և գրավոր ներկայացվում մյուսին:

3.3 Արոնենտից ջրահեռացման համակարգ լցվող կեղտաջրերի քանակը, ըստ կանոնների, հավասար է մատակարարված ջրի քանակին: Դրա չհամապատասխանելու դեպքում քանակը որոշվում է կանոնով սահմանված հաշվարկներով:

4.ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Արոնենտին մատակարարված ջրի և կեղտաջրերի հեռացման ու մաքրման վարձի վճարումը կատարվում է պայմանագրում նշված սակագներով:

Վարձավճարը մուծվում է ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՎՏԲ ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ Ծաղկահովիտ Մ/Ճ Հ/Հ 1610200718820 Պայմանագրի կնքման պահից գործում են հետևյալ սակագները՝

Մեկ խորանարդ մետր մատակարարվող ջրի համար 150 դրամ

Մեկ խորանարդ մետր հեռացվող կեղտաջրի համար 35 դրամ

4.2Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոփոխված սակագների կիրառումը պարտադիր է կերմերի համար:

ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի պարտավորությունները չկատարելու դեպքում, չկատարած կողմը պարտավոր է կողմին հատուցել պատճառած վնասը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2 Ջրի չմատակարարման, կեղտաջրերի չհեռացման կամ դրանց ոչ պատշաճ կատարման դեպքում բացառությամբ կանոնների 80-րդ և 81-րդ կետերում նշված դեպքերի , ընկերությունն արոնենտին չմատակարարած ջրի և ջրհեռացված կեղտաջրերի փաստացի քանակների համար վճարում է տույժ սակագների կրկնապատիկի չափով:

5.3 Հաշվարկային ժամկետում պայմանագրով նախատեսված ջրաքանակը գերածախսելու , ինչպես ջրահեռացման , համակարգ ավելի բաց թողնված կեղտաջրերի համար արոնենտը վճարում է տույժ գերածախսի և ավելի բաց թողնված կեղտաջրերի սակագնի տասնապատիկի չափով:

5.4 Արոնենտի կողմից ընկերության ջրահեռացման համակարգ լցվող կեղտաջրերի կեղտոտվածության աստիճանը չպետք է գերազանցի ՀՀ բնապահպանության նախարարության սահմանված նորմերը:

5.5 Սույն պայմանագրի կատարման ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծել բանակցությունների միջոցով, որը չի սահմանափակում կողմերի վեճերը դատական կարգով լուծելու իրավունքը:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրվելու պահից և տարածվում է 2017թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

6.2 Պայմանագրի գործողության ժամկետը մատակարարվող ջրի և ջրհեռացման համակարգ լցվող կեղտաքանակների փոփոխման դեպքում պայմանագիրը ենթակա է փոփոխման:

6.3 Պայմանագրի փոփոխումը և լուծումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագրի գործողության ժամկետի ավարտը կամ դրա լուծումը կողմերի միջև մինչև այդ պայմանագրի խախտելու համար պատասխանատվությունից:

6.4 Պայմանգիրը կնքվում է անժամկետ և կարող է լուծարվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ

6.5 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, յուրաքանչյուր կողմի համար մեկական օրինակ:

| ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ | ԱԲՈՆԵՆՏ |
|---|---|
| ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ „ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ" «ՀՈԱԿ» | ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԴԵՄԱՐԻ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ — ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ... |
| ՀՎՀՀ 05019914 | |
| Հ/Հ 16102007188200 | ՀՎՀՀ 00153247 |
| Հ/Հ 220425140120000 | Հ/Հ 900011001362 |
| ՏՆՕՐԵՆ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | |